

տալ: Եւ մնում է ցանկալ որ պ. Աւալօվի այս գեղեցիկ գործը օրինակ հանդիսանայ շատ շատերի համար:

1.

48) Բժ. Ա. Թուղուղեան.—1. «Կարիք եւ Թարեզութարիւն», 2. «Մանկավարժական համառօս գրոյցներ», 3. «Ֆառանգականութիւն եւ դաստիարակութիւն», 4. «Մարմնամարզութիւն», տպագրուած 1901 թուին:

Դժուար կը մինէր մի առ մի մամրամասն քննել յարգելի բժշկի այս չորս նորագոյն աշխատութիւնները: Ընթերցողը վերանագրերից արդէն նկատում է որ շատ բազմակողմանի խնդիրներ է չօշափում հնդինակը իր աշխատութիւնների մէջ, որոնց թիւը այսօր հասել է 17-ի:

Բժկ. Թուղուղեանի գրելու եղանակի հետ մենք արդէն ձանօթացրել ենք «Մուրճի» ընթերցողներին: Երա հեղինակութիւնները կարելի է լսկապէս երկուսի բաժանել:—սոսկ ժողովրդական ձեռնարկներ և փիլիսոփայական հայեացքներ որոշ հարցերի վրայ:

Վերև յիշած գրքոյնների մէջ առաջին տեսակին կարելի է վերաբերել նրա «Մարմնամարզութիւնը», որ իր նկարներով դիւրամարս է դառնում և գործնական նշանակութիւն ստանում:

Մի ակնարկ գցելով երեխանների կանոնաւոր կրթութեան ու դաստիարակութեան խնդրի վրայ, ցոյց տալով ընտանիքին կրթութեան ահագին նշանակութիւնը, նա կանգ է առնում ֆիզիկական մարզութիւնների և բարոյական ու մտաւոր կրթութեան վրայ: Դրքի վերջում հնդինակը (ալէտք է ասած համառօտորէն) խսում է մարմնական մարզութիւնների մի քանի ձեւերի մասին:

Յայտնի է որ նորագոյն մանկական-առողջապահական գիտութիւնը աւելի պահանջում է աղատ, բայցօթեայ իսաղեր—վագ, թոփչէ և դիմադրական մարզութիւններ (Շվեդական մարզութիւններ), ինչպէս և ասում է պ. հնդինակը:

Սակայն իսկական մարմնամարզութիւնը (սենեակի մէջ, թէ դուրսը) թէ առանց գործիքների և թէ գործիքների միջոցով (օր. գնդակի, լեփուկի, ձողերի, պարանների, բետինէ լարերի զիւերի միջոցով) նոյնպէս շատ օդտաւէտ են և գործածելի են ձմեռը սենեակում:

Հոկտեմբեր, 1901.

Ի՞նքը հեղինակը շատ իրաւացի նկատում է, որ Փիզիկական կրթութիւնը երբեք նկատի չը պէտք է ունենայ մանուկներից առլէսներ պատրաստել, զարգացնելով միայն թևերի ու ոտերի մկանները, այլ պէտք է ձգտէ համաչափ կերպով, ներդաշնակօրէն զարգացնել կազմուածքի բոլոր մկանները, որով միենոյն ժամանակ զարգանում են ու ամրապնդում չնչառական ու արնարաշխ գործարանները (թռք. սիրտ) *):

Յարգելի բժիշկը մի լաւ միաք է յղացել. նա զետեղել է մի թերթի վրայ բոլոր նկարները (այդ թերթը արտատպուած է առանձին հաստ թղթի վրայ՝ պատին կացնելու համար): Բաւական է այդ թերթը բանակ ու նկարների ձևով մարզուել:

Կան 24 ձեի նկարներ, որ բաւարար կարելի է համարել սենեակում մարմնամարզութեան համար:

Եթէ հեղինակը աւելի լայն և աւելի լիակատար դրած լինէր գործը (օր. նկարագրէր նոյնպէս և մի քանի բացօթեայ խմբային խաղեր) **), նրա գիրքը շատ աւելի գործնական կը դառնար:

«Մարմնամարզութիւնը», պէտք է ամեն տան մէջ գտնուի և թող ամեն տան մէջ երեխանները առաւօտերեկոյ կատարեն այդ մարզութիւնները:

Մնացած երեք գրքոյները ընթերցանութեան համար շատ յաջող կազմած աշխատութիւններ են, և շատ օգտաւէտ կը լինեն որոշ կարգի ընթերցողների համար, որոնք փոքր ի շատէ պատրաստուած են ըմբռնելու հեղինակի լայն մտքերը:

Բժկ. Բուգուղեանը գիտէ բազմակողմանի դարձնել իր աշխարհայեցողութիւնը և ստիպում է ընթերցողին հետաքրքրուել ու առանձին-առանձին ուսումնամիրել չօշափած ինտիրոները: Կրկին ցանկանում ենք տոկունութիւն անխոնջ աշխատողին և սպասում խոստացած միւս հրատարակութիւններին:

Բժ. Վ.

*) Տե՛ս իմ Դպրոցական դաստիարակութիւն»:

**) Այլպիսի մի ձեռնարկ կազմել է ոգ. Բարխուդարեանը՝ «Մանկական խաղեր»:

Ն Ո Ւ Ս Տ Ա Ց Ո Ւ Խ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

-
- 1) Գ. Սունդուկեանց, «Պէտօ», կօմեղիս երեք արարուածով,
2-րդ տակ, ուղղած, Թիֆլիս, 1901 թ., գինն է 50 կոպ.:
 - 2) Սահակ-Մեսրոպեան Մատենադարան, Ե. Գիրք թղթոց,
մատենադրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901 թ., գինն է
1 ռ. 50 կոպ.:
 - 3) Մ. Գօրկիյ, Մի անգամ աշնանը..., թարգմ. Ս. Շահումեանցի,
Թիֆլիս, 1901 թ., գինն է 7 կոպ.:
 - 4) Յ. Մուրադեան, Համշէնցի հայեր, արտատպած «Ազգ.
Հանդ»-ից, Թիֆլիս, 1901 թ., գինն է 40 կոպ.: